ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 հոկտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

147
(2997)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳՈՒՅԵ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՀԵՌՈՒ ՓՆՏՐԵԼ ՊԵՏՔ ՉԷ՞Ր

Արմավիրի մարզպետի տեղակալը՝ Խաչատուր Մկրտչյանը, 28 տարի համայնքապետարանում տարբեր պաշտոններ զբաղեցնելուն զուգահեռ, համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող ՀՈԱԿ-ներում տեղավորել է կնոջը՝ Լուսածին Ալեքսանյանին եւ համատեղ բնակվող Անահիտ Մկրտչյանին:

Երբ վարչապետ Փաշինյանը Արմավիրի մարզի դպրոցներում տարեսկզբին պոզով-պոչով կոռուպցիա էր փնտրում, գուցե մտքով չէր անցնում, որ կոռուպցիան ոչ շատ հեռու Արմավիրի համայնքապետարանում է:

Խաչատուր Մկրտչյանը 1996 թվականից Արմավիրի համայնքապետարանում աշխատանքի է տեղավորվել՝ որպես ՀՀ Արմավիրի մարզպետարանի տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի առաջատար, այնուհետեւ գլխավոր մասնագետ:

Դրանից հետո՝ 2000 թվականից, եղել է նաեւ Արմավիրի մարզպետարանում՝ որպես Քաղաքաշինության վարչության պետ: Հաջորդ պաշտոնը կրկին մարզպետի տեղակալն է եղել, ապա խորհրդական եւ կրկին մարզպետի տեղակալ:

Փոխմարզպետ Մկրտչյանը կնոջը աշխատանքի է տեղավորել «Արմավիրի համայնքապետարանի գրադարան» ՀՈԱԿ-ում՝ որպես տնօրեն, իսկ իր հետ համատեղ բնակվող Անահիտ Մկրտչյանին «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 10 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում՝ որպես հոգեբան:

Հովհաննես Մկրտչյանը՝ փոխմարզպետի որդին, աշխատում է որպես ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ:

Փոխմարզպետը հայտարարագրել է 3 անշարժ գույք՝ 1 բնակարան բազմաբնակարան շենքում Արմավիրի մարզի Արմավիր համայնքում եւ 2 հողամաս Շենավան համայնքում:

Փոխմարզպետի բանկային հաշիվների մնացորդը կազմել է 720 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցը կազմել է 4 մլն 800 հազար դրամ:

Տարեկան եկամուտը 6 մլն 334 հազար դրամ է կազմել, որից 5 մլն 448 հազարն աշխատանքի վարձատրություն է ՀՀ Արմավիրի մարզի համայնքապետարանի աշխատակազմից, 685 հազար դրամը կենսաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, 200 հազար դրամը այլ եկամուտ է, որի աղբյուրը հստակ նշված չէ:



Այս տարվա հուլիսի 10-ից մինչ օրս քաղաքական իշխանությունը ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի գիտնական անդամ չի կարողանում գտնել եւ փնտրտուքի մեջ է: Հիշեցնենք, որ Վիգեն Քոչարյանի լիազորությունները ԲԴԽ-ում ավարտվել էին հունիսի 25-ին՝ պաշտոնավարման հինգ տարին լրանալու հիմքով: Եվ քանի որ անցած այդ 5 տարիներին Վիգեն Քոչարյանը ԲԴԽ-ում պաշտոնավարել է քաղաքական իշխանությանը ոչ թե հակադրվելու, այլ ծառայություն մատուցելու սկզբունքներով, օրերս ընտրվեց Վճռաբեկ դատարանի դատավոր: Նրա հետ Վճռաբեկ դատարան գնաց նաեւ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ ԲԴԽ անդամ Հայկ Գրիգորյանը, ու հիմա ՔՊ-ի քարը ավելի է ծանրացել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ քաղաքական իշխանությունը գիտնական երկու անդամի թեկնածուների փնտրտուքի մեջ է. պիտի գտնեն ու բերեն ԱԺ՝ ընտրվելու: Սակայն, թեկնածուներ դեռ չկան:

ԵՄ-ին անդամակցելու համար հանրաքվե անցկացնելու պահանջով ստորագրահավաքի համար անհրաժեշտ 50.000 ստորագրությունը հավաքվել է: Իսկ ո՞րն է լինելու հաջորդ քայլը, ի՞նչ են պատրաստվում անել ստորագրահավաքը նախաձեռնած արտախորհրդարանական ուժերը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հայաստանի «Եվրոպական» կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանը հայտնեց, որ արդեն հաջորդ շաբաթ թղթերը կհանձնեն ԿԸՀ, երբ ԿԸՀ-ն հաստատի արդյունքները, արտախորհրդարանական ուժերը նախաձեռնությունը կհանձնեն խորհրդարան: Տիգրան Խզմալյանի խոսքով՝ արդեն նոյեմբերի սկզբին ստորագրահավաքի արդյունքները կհանձնեն ԱԺ: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ հայտնել էր. «Նիկոլ Փաշինյանը ամենեւին այս հարցով հանրաքվե անցկացնելու մտադրություն չունի, նա իր թիմակիցների հետ փակ հանդիպման ժամանակ հստակ հայտարարել է՝ ոչ մի հանրաքվե էլ չի լինելու: Այս մասին նա հրապարակավ հայտարարել էր նաեւ դեռ ամռանը՝ Ժողովրդավարության հայկական ֆորումի ժամանակ՝ ասելով, որ Եվրամիությանն անդամակցելու հարցով հանրաքվե անցկացնելու անհրաժեշտություն ինքը չի տեսնում, քանի որ «գիտի ժողովրդի կարծիքը»: Նիկոլ Փաշինյանի այս հայտարարություններից դատելով՝ կարող ենք արձանագրել, որ այս նախաձեռնությունը խորհրդարանում մերժվելու է: Ընթացակարգի համաձայն, եթե ԱԺ-ն 50 հազար ստորագրությամբ մերժի արտախորհրդարանական ուժերի այս նախաձեռնությունը, ապա նրանք կարող են 300 հազար ստորագրություն հավաքել եւ կրկին նույն օրակարգով դիմել ԱԺ-ին»: Եվ այժմ տեսնում ենք, որ նախատեսված ստորագրությունները հավաքվել են: Հետեւենք՝ ինչ զարգացումներ կլինեն:

Երեկ Նիկոլ Փաշինյանն Ազգային ժողովում հանդիպել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հետ: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Կառավարության անդամները: Ինչպես կուսակցության տարածած պաշտոնական հաղորդագրության մեջ է նշվում՝ ՔՊ-ականները արտաքին քաղաքական հարցեր են քննարկել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԺ երեկվա հանդիպումը ՔՊ խմբակցության պատգամավորների նախաձեռնությամբ է եղել ու տեւել է մինչեւ ուշ երեկո: Մեր տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը իր վերջին արտագնա հանդիպումների արդյունքներն է ներկայացրել. խոսքը, մասնավորապես, Կազանում՝ BRICS-ի 16-րդ գագաթնաժողովի ընթացքում Իլհամ Ալիեւի հետ ունեցած հանդիպման մասին է: Նախ Նիկոլ Փաշինյանն է ելույթով հանդես եկել, հետո ՔՊ-ականները նրան հարցեր են ուղղել՝ Խաղաղության պայմանագրից, սահմանազատումից: Ինչպես իշխանական պատգամավորներն են մեզ փոխանցում՝ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանը նոր բան չի ասել. «Ինչ գիտենք՝ դա էր», - ասացին իշխանական պատգամավորները:

ԶՐՈՒՅՑ

«ԱՌԱՆՑ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԵՆ ՔԱՅԼԵՐԻ ԳՆՈՒՄ», ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայաստանի խորհրդարանն այս շաբաթ վավերացրեց Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովի կանոնակարգը: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հաստատել է Հայաստանի հետ սահմանի սահմանազատման եւ անվտանգության հանձնաժողովի համատեղ գործունեության կանոնակարգը:

Ի՞նչ զարգացումներ են հնարավոր:

Այս հարցերի վերաբերյալ զրուցել ենք քաղաքական վերլուծաբան Արմեն Բաղդասարյանի հետ:

-Պարոն Բաղդասարյան, հաջորդ քայլը, ըստ էության, ո՞րն է լինելու, ի՞նչ զարգացումներ են հնարավոր՝ կանոնակարգի հաստատումից հետո:

-Ես չեմ կարող ասել, սակայն տրամաբանորեն հաջորդ քայլը պիտի լիներ որոշումն այն մասին, թե որ հատվածում պիտի սահմանազատում լինի: Տրամաբանությունը դա է ասում, եւ հաջորդ փուլով, կրկին տրամաբանության համաձայն, Ադրբեջանը պետք է դուրս գար գրավյալ տարածքներից՝ Ջերմուկից, ներքին Հանդից, Սեւանի ավազանից եւ այլն: Բայց քանի որ տրամաբանությունը դա է հուշում, ենթադրում եմ, որ Ադրբեջանն այդ քայլին չի գնա: Կամ ընդհանրապես կսառեցնի սահմանազատման գործընթացը, կամ այնպես կանի, որ հաջորդ փուլով սահմանազատվեն Արծվաշենի տարածքները՝ այն տրամաբանությամբ, որ այնտեղ բնակավայրեր են եղել, իսկ մյուս հատվածներում բնակավայրեր չեն եղել:

-Պարոն Բաղդասարյան, Հայաստանի Հանրապետության իշխանությունները եւ հենց Նիկոլ Փաշինյանն ինքը Կառավարության նիստի ժամանակ ասաց, որ սահմանազատումից հետո Ադրբեջանը դուրս է գալու Հայաստանի Հանրապետության տարածքներից, բայց չեն տալիս երաշխիքներ: Նրանք նշում են, որ դուրս է գալու, սակայն չգիտեն՝ ե՞րբ, տասը տարի հետո, քսան տարի հետո....: Փաստորեն, իշխանությունն առանց Ադրբեջանի կողմից երաշխիքներ ունենալու, եւ առանց հայաստանյան կողմի երաշխիքների գնում է սահմանազատմա՞ն:

-Այո՛, այդպես էլ կա. առանց որեւէ երաշխիքի՝ գնում է սահմանազատման: Սակայն առանց սահմանազատման, առանց իրավական հիմքերը մինչեւ վերջ հստակեցնելու, չէր կարելի նման բան անել՝ ո՛չ թե ասել Ալմաթիի հռչակագրի հիման վրա, կամ այլ կարգավորումներով: Սա նշանակում է անորոշությունը, ինչը Ադրբեջանը միշտ օգտագործելու՝ է իր հարմարությունից ելնելով:

-Հայկական կողմից հանձնաժողովը ղեկավարող ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը հայտարարեց, որ հստակ քարտեզներ չկան՝ թե որոնց հիման վրա է լինելու սահմանազատումը: Սա ի՞նչ վտանգավոր ռիսկերի կարող է հանգեցնել:

-Դա առաջին հերթին Ադրբեջանին թույլ կտա սահմանի որեւէ կամայական հատվածում պնդել՝ առաջնորդվելու այն քարտեզով, որն իրեն է ձեռնտու, իսկ վիճելի հարցերի դեպքում կարող են առաջանալ լարվածության օջախներ, կամ պատճառ դառնալ գործընթացի կասեցման առիթ: Այսինքն՝ այդ վտանգը միշտ կա, սակայն պետք է հասկանանք, որ սահմանազատում պետք չէր սկսել մինչեւ խաղաղության համաձայնագրի հաստատումը, քանի որ սահմանազատումն ու սահմանագծումը խաղաղության համաձայնագրի բաղադրիչ մաս են կազմում, եւ եթե չկա դրան հասնելու քաղաքական կամք, ապա գործընթացները միշտ լարվածության հիմք են դառնալու:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆԱԽԱԳԱՀԸ ՍՏՈՐԱԳՐԵՑ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՔԸ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը հոկտեմբերի 24-ին ստորագրել է «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը վավերացնելու մասին» օրենքը, հայտնում են նախագահի աշխատակազմից:

Հիշեցնենք՝ ԱԺ-ն հոկտեմբերի 23-ին վավերացրեց կանոնակարգը հաստատելու մասին օրենքը. այն ստացել էր 67 կողմ ձայն:

ԱԼԻԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼ Է

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հրամանագիր է ստորագրել, որով հաստատել է Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովների գործունեության կանոնակարգը:

Հրամանագրով հաստատվում է 2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի եւ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի համատեղ գործունեության մասին կանոնակարգ»:

Ավելի վաղ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը եւս ստորագրել էր «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը վավերացնելու մասին» օրենքը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը շնորհավորել է Ղազախստանի ժողովրդին եւ կառավարությանը Հանրապետության օրվա կապակցությամբ:

«Հայաստանը ակնկալում է Երեւանի եւ Աստանայի միջեւ հեռանկարային ռազմավարական համագործակցության հետագա զարգացում՝ հիմնված փոխադարձ հարգանքի եւ վստահության վրա»,- ասված է ՀՀ ԱԳՆ ուղերձում:

ԸՆԹԱՑԻԿ

ԻՆՉԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ Է ԲԱՆԱԿՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ ԿՅԱՆՔԻՑ ՁՐԿՎԵԼՈՒ 33 ԴԵՊՔ

Նախորդ տարվա համեմատ այս տարի տվյալ պահի դրությամբ բանակում մահվան դեպքերը գրեթե 2 անգամ նվազել են, «Հանրային» հ/ը եթերում հայտնել է ՊՆ մամուլի քարտուղար Արամ Թորոսյանը:

Թորոսյանը նշել է, որ տարբեր իրավապաշտպաններ եւ փորձագետներ, երբ հայտարարում են, որ, օրինակ, 2024 թվականին զինված ուժերում մահվան 33 դեպք է արձանագրվել, չեն նշում, թե այդ դեպքերից քանիսն են ծառայողական պարտականությունների հետ կապված, ուստի հանրության շրջանում թյուրընկալումներ են լինում, մարդիկ կարող են կարծել, որ, օրինակ, այս տարվա ընթացքում արձանագրված 33 մահվան դեպքերը միայն ինքնասպանություններ եւ սպանություններ են:

ՊՆ մամուլի քարտուղարը ներկայացրել է 33 մահվան դեպքերի պատճառները.

. Ավիավթար - 2

. Հիվանդության հետեւանքով - 5

. ՃՏՊ հետեւանքով- 11 դեպք, որից 7-ը ծառայության հետ չկապված

. Դժբախտ պատահար - 5:

ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՊԵՏԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ

Քննչական կոմիտեն ԱԱԾ աշխատակիցների օժանդակությամբ ամռանը քննչական եւ վարութային գործողություններ էր իրականացրել Արաբկիրի թաղապետարանում, որից հետո ձերբակալվել էին թաղապետ Արամ Ազատյանն ու նրա երկու տեղակալները:

Արաբկիրի թաղապետարանի պաշտոնյաների վերաբերյալ քրեական գործով քննության առարկա են ինքնակամ կառույցները չքանդելու համար կաշառքի եւ շենքերի բարեկարգման համար հատկացվող գումարների յուրացման, փաստաթղթերի կեղծման ենթադրյալ հանգամանքները: Ըստ քրեական վարույթի՝ շինարարական ընկերություններից մեկը պետք է զբաղվեր շենքի շքամուտքերի բարեկարգման աշխատանքներով, սակայն այդ աշխատանքները պատշաճ չեն կատարվել, հատկացվող գումարները յուրացվել են: Հենց այս գործընթացին է առնչվում նաեւ փաստաթղթերի կեղծման ենթադրյալ արարքը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ չարաշահումների գործի մեջ մտնում է նաեւ այսօր բացված Մերգելյան այգու շինարարությունը, որի համար Ազատյանը, ըստ տեղեկության, գումարներ է վերցրել որոշ մարդկանցից, սակայն այդ գումարները նպատակին չեն ծառայել, վատվել են:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանին հետ՝ պարզելու համար, թե ինչպես է ստացվում, որ նախկին թաղապետը մեղադրվում է տարբեր մարդկանցից գումարներ վերցնելու եւ այգին նորոգելու համար, սակայն չի իրագործել: Դրան զուգահեռ այս ժամանակահատվածում այգին պատրաստ է շահագործման, այդ դեպքում ինչու է կալանավորված թաղապետը, իսկ այգին այսօր բացվում է:

Մերգելյան այգու բացմանը ներկա էր նաեւ Արաբկիրի թաղապետ Սուրեն Վարոսյանը եւ «Ժողովուրդ» օրաթերթը նրա հետ եւս զրուցել է իրեն նախորդած թաղապետի քրեական գործերից եւ այգու կառուցման վերաբերյալ չարաշահումներից:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

BRICS–Ի ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհակալություն է հայտնել բոլոր գործընկերներին, որոնք ժամանել են Կազան՝ BRICS-ի գագաթնաժողովին՝ ընդհանուր աշխատանքում իրենց ներդրումն ունենալու համար:

Ինչպես հայտնում է «ՌԻԱ Նովոստի»-ն՝ Պուտինն այս մասին ասել է BRICS-ի արդյունքների վերաբերյալ իր ասուլիսում:

Կազանում կայացած «BRICS+» գագաթնաժողովին մասնակցել է նաեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՌԴ–Ի ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ

Չերբակալվել է Ռուսաստանի էներգետիկայի փոխնախարար Սերգեյ Մոչալնիկովը:

Այս մասին «ՌԻԱ Նովոստի»-ին հայտնել են իրավապահ մարմիններից:

«Մեղադրանք առաջադրելու եւ խափանման միջոցի հարցը որոշվում է»,- ասել են գործակալությանը:

Գործի նյութերը դատարան կուղարկվեն հոկտեմբերի 25-ին:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՐՎ. ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը եւ Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանը հեռախոսազրույցի ընթացքում քննարկել են Հրվ.Կովկասում արդար եւ կայուն խաղաղության հասնելու կարեւորությունը, հայտնում է Պետքարտուղարությունը:

«Նրանք քննարկել են Հարավային Կովկասում արդար եւ կայուն խաղաղության հասնելու կարեւորությունը՝ փոխադարձ կապերի ընդլայնմամբ, ինչն օգուտ կբերի ամբողջ տարածաշրջանին», - ասվում է հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ կողմերը քննարկել են նաեւ Գազայում ու Լիբանանում տիրող իրավիճակը:

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայում արգելված եւ ահաբեկչական ճանաչված Քրդստանի բանվորական կուսակցությունը (PKK) ստանձնել է հոկտեմբերի 23-ին Անկարայում տեղի ունեցած ահաբեկչության պատասխանատվությունը: Այս մասին հայտնում է ՏՓzձՖ հեռուստաալիքը՝ հղում անելով PKK-ի հայտարարությանը:

Նշվել է, որ հարձակումն իրականացրել են այսպես կոչված «Անմահ գումարտակի» զինյալները, որը համարվում է PKK-ի ռազմական թեւը: Ենթադրվում է նաեւ, որ ահաբեկչությունը վաղուց էր ծրագրված եւ կապված չէ Թուրքիայի ներքաղաքական իրադարձությունների, մասնավորապես քրդական հարցի լուծման իշխանությունների նախաձեռնությունների հետ:

ԹՐԱՄՓԻ ԱՐՇԱԳԱՆՔԸ

ՀԱՐՐԻՍԸ ՈՉԻՆՉ ՉԱՐԵՑ, ԵՐԲ 120,000 ՀԱՅ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԵՑ ԱՐՑԱԽԻՑ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում նոյեմբերի 5-ին կայանալիք նախագահական ընտրություններին ընդառաջ մրցակցությունն ու նախընտրական քարոզչությունը թեժանում է: Երկու թեկնածուներն էլ փորձում են իվե հավաքել՝ ի հաշիվ տարբեր էթնիկ կամ կրոնական խմբերի, գենդերային փոքրամասնությունների եւ նույնասեռական համայնքի հույզերի:

Նախընտրական քարոզարշավում հատկապես կարեւոր տեղ է զբաղեցնում Հարավային Կովկասը՝ առկա խնդիրներով եւ մարտահրավերներով: Հայերը այս մրցապայքարից եւս անմասն չեն մնացել:

Նախընտրական պայքարի մեկնարկից ի վեր թե՛ հանրապետականները, եւ թե՛ դեմոկրատները իրենց ելույթներում բազմիցս անդրադարձ են կատարել Հայոց Ցեղասպանությանը, արցախցիների՝ իրենց հայրենիք վերադառնալու հնարավորությանը եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանն ու տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Դեռեւս շաբաթներ առաջ Հայաստանի անկախության տոնի առթիվ ԱՄՆ նախագահի դեմոկրատ թեկնածու Քամալա Հարրիսը ամերիկահայ համայնքին ուղղված իր շնորհավորական ուղերձը որում նշել էր. «Այս կարեւոր օրը նշելուն զուգահեռ՝ հարկավոր է միշտ հիշել նաեւ Հայոց ցեղասպանությունը, երբ մոտ 1,5 միլիոն հայեր տեղահանվեցին, կոտորվեցին եւ ուղարկվեցին մահվան: Դա մի ողբերգություն է, որը շարունակում է ձեւավորել հայ ժողովրդի ինքնությունը: Ամերիկահայ համայնքի տոկունությունը ոգեշնչման աղբյուր է մեր ընդհանուր ամերիկյան պատմության համար» եւ հավելել, որ Լեռնային Ղարաբաղից տեղահանված հայերի՝ իրենց տներն անվտանգ վերադառնալու իրավունքը չափազանց կարեւոր է հայ ժողովրդի արժանապատվությունը եւ տարածաշրջանում կայունությունը վերականգնելու տեսանկյունից:

«Ես կշարունակեմ աջակցել Հայաստանի՝ ժողովրդավարության ամրապնդման եւ տարածաշրջանում կայունության հաստատման ջանքերին: Հայաստանն ու նրա ժողովուրդն ունեն հարուստ պատմություն, որը ոգեշնչում է բոլորիս պայքարել հանուն ազատության եւ արդարության: Հավատարիմ եմ մնում մեր երկրների միջեւ կապերի խորացմանը եւ գործընկերային հարաբերությունների ամրապնդմանը, որոնք ի ցույց են դնում մեր ընդհանուր արժեքներն ու ձգտումները: Միասին կարող ենք կառուցել ավելի ապահով, արդար եւ ազատ աշխարհ», - ասված էր շնորհավորական ուղերձում:

Հարրիսի ուղերձին արձագանքել է նախագահի հանրապետական թեկնածու Դոնալդ Թրամփը, ով անցյալ օրը Truth սոցիալական ցանցի իր էջում գրել է. «Քամալա Հարրիսը ոչինչ չարեց, երբ 120,000 հայ քրիստոնյաներ դաժանորեն հալածվեցին եւ բռնի տեղահանվեցին Արցախից: Քրիստոնյաները ամբողջ աշխարհում անվտանգ չեն լինի, եթե Քամալա Հարրիսը դառնա Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ: Երբ ես դառնամ նախագահ, ես կպաշտպանեմ հալածված քրիստոնյաներին, կաշխատեմ դադարեցնել բռնությունն ու էթնիկ զտումները, եւ մենք կվերականգնենք խաղաղությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ»:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում ասված յուրաքանչյուր խոսք մեծ ազդեցություն կարող է թողնել մրցապայքարի ելքի վրա եւ հայերի վերաբերյալ արված արտահայտությունները հավասարապես ազդեցություն ունեն, ինչպես այլ ոլորտների մասին, կամ այլ խմբերին ուղղված ելույթներն ու գրառումները: Թե ինչքանով կապ ունի Թրամփի մեկ օր առաջ արված գրառումը նրա վարկանիշի բարձրացման հետ, դժվար է ասել: Սակայն այն արդեն իսկ տրամադրությունների փոփոխության պատճառ է դարձել հայ համայնքի ներսում: Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը, անդրադարձ կատարելով ԱՄՆ նախագահի թեկնածուի այս վերջին հայտարարությանը, նշել է. «Նախագահ Թրամփը, ով կտրուկ ավելացրել է ԱՄՆ ռազմական օգնությունը Ադրբեջանին՝զինելով եւ քաջալերելով Ալիեւի ռեժիմի 2020թ. հարձակումը Արցախի վրա, պետք է անի ավելին, քան քարոզարշավի հայտարարություն հրապարակելը, պետք է փաստացի արդյունքներ գրանցի մինչեւ ընտրությունների օրը: Նա կարող է սկսել՝ հրապարակայնորեն սատարելով արցախցիների վերադարձի իրավունքը եւ անձամբ կոչ անելով Ներկայացուցիչների պալատի խոսնակ Ջոնսոնին քվեարկության դնել թիվ 7288 բանաձեւը... Չնայած մենք ուրախ ենք տեսնել, որ մեր համայնքի կայուն ներգրավվածությունը ստիպել է Արցախին եւ Հայաստանին վերաբերող հարցերը բերել ընտրական քննարկումների դաշտ, այնուամենայնիվ, մենք ակնկալում ենք եւ արժանի ենք ավելիին, քան խոսքերը»:

Նշենք, որ այս պահի դրությամբ ԱՄՆ նախագահի երկու թեկնածուների հաղթելու հավանականությունը գրեթե հավասար է: New York Times ամսագրում հրապարակված էքսիթ փոլի համաձայն՝ Թրամփը Հարրիսին զիջում է 1 տոկոսով միայն՝ հավակնելով ընտրողների 48 տոկոսի ձայներին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԼԵՎՈՆ ՏԵՐ–ՊԵՏՐՈՍՅԱՆՆ ՈՒ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿԸ

Հոկտեմբերի 24-ին, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն իր առանձնատանը հանդիպել է Հայաստանում Ֆրանսիայի Արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Օլիվիե Դըկոտինյիի հետ:

Դեսպանի խնդրանքով նախագահը անդրադարձել է Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքական խնդիրներին: Միաժամանակ նա շնորհակալություն է հայտնել մեր երկրի ներկայիս ծանր իրավիճակում Ֆրանսիայի կառավարության դրսեւորած անկեղծ եւ սկզբունքային աջակցության համար:

Անդրադառնալով Հայաստանի հանդեպ Ֆրանսիայի կառավարության եւ ժողովրդի տածած ջերմ բարեկամական զգացմունքներին, Լեւոն Տեր-Պետրոսյանը հատկապես մատնանշել է Շառլ Ազնավուրի հուղարկավորության եւ Միսաք ու Մելինե Մանուշյանների աճյունները Պանթեոնում ամփոփելու հոգեցունց եւ խորհրդանշական պետական արարողությունները: Հանդիպմանը ներկա է եղել ՀՀ Առաջին Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գրասենյակի տնօրեն Ավետիս Ավագյանը:

300–ՀԱԶԱՐԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐԸ ԿՍՏԱՆԱ ԵՎՍ 2 ԱՄԻՍ

Կառավարությունը հոկտեմբերի 24-ի նիստում որոշեց երկարաձգել անհետ կորած զինծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցության ծրագիրը:

Նշենք, որ նախատեսված է մինչեւ 2024թ. հոկտեմբեր ամիսը ներառյալ ամենամսյա դրամական վճարի ձեւով սոցիալական աջակցության տրամադրում զինծառայողի ընտանիքին՝ամսական 300.000 դրամի չափով:

Զինծառայողների ընտանիքներին ամենամսյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվում է, եթե ամենամսյա դրամական վճարը վճարվել է մինչեւ հոկտեմբեր ամիսը ներառյալ, որի արդյունքում 14.10.2024թ. դրությամբ դեռեւս անհայտ բացակայող ճանաչելու մասին դատական ակտեր չունեցող թվով 23 անհայտ կորած համարվող զինծառայողների ընտանիքների աջակցության տրամադրումը դադարեցվելու է 2024թ. նոյեմբերի 1-ից:

Այս որոշմամբ առաջարկվում է աջակցության վճարման ժամկետը երկարաձգել մինչեւ 2024 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ:

23 անհետ կորած զինծառայողի ընտանիքի աջակցության տրամադրման ֆինանսական հաշվարկը 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար կազմում է 13.8 մլն դրամ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՎԱՐՈՒՅԹ

ՏՆՕՐԵՆԸ ՇՈՒՐՋ 521 ՀԱԶ. ԱՄՆ ԴՈԼԱՐԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԴՐԱՄ Է ՀԱՓՇՏԱԿԵԼ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ֆինչական բաժնում ավարտվել է խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով գույքը հափշտակելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Այս մասին տեղեկացրին ՀՀ ֆինչական կոմիտեից:

«Իրականացված քննչական եւ ապացուցողական անհրաժեշտ գործողություններով պարզվել է, որ թվով երեք ՍՊ ընկերությունների տնօրեն Ս.Զ.-ն, ունենալով ընկերությունների գույքը տնօրինելու եւ դրանց անունից հանդես գալու իրավասություն, ի սկզբանե տեղյակ լինելով այն մասին, որ տրվել են Երեւան քաղաքի Դավթաշեն Տ.Պետրոսյան 73-րդ, Ֆուչիկի 6/1, Երեւան քաղաքի Հալաբյան 55/1 եւ Երեւան քաղաքի Դավթաշեն 4-րդ թաղամաս 45/5 հասցեներում 12 հարկանի բազմաբնակարան շենքեր կառուցելու թույլտվություններ, ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, քաղաքացիների հետ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ առանց նոտարական վավերացման եւ պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման, հասարակ գրավոր ձեւով, հետագայում հիմնական պայմանագիր կնքելու պատրվակով, 2018թ. ընթացքում կնքել է վերոհիշյալ հասցեներում գտնվող բնակարանների, ինչպես նաեւ՝ ավտոկայանատեղիների՝ի սկզբանե առոչինչ առուվաճառքի նախնական պայմանագրեր, որոնք նոտարական կարգով չեն վավերացվել եւ չեն ստացել իրավունքների պետական գրանցում:

Բնակարանների ձեռք բերման դեպքում, որպես բնակարանի գնի կանխավճար, Ս.Զ.-ն ստացել է առանձնապես խոշոր չափերի կանխավճարներ, իսկ ավտոկայանատեղիների դեպքում՝ դրանց արժեքն ամբողջությամբ:

Հետագայում իրեն հանձնված գումարները հափշտակելով՝ Ս.Զ.-ն դրանք տնօրինել է սեփական կարիքների համար՝այդ կերպ անձանց պատճառելով խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով գույքային վնաս:

Նախաքննության ընթացքում 14 անձ տուժող է ճանաչվել: Վերջիններիս հասցված ընդհանուր վնասի չափը, քննության տվյալներով, կազմում է շուրջ 521.358 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Տուժողներին հասցված վնասից շուրջ 294.354 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը նախաքննության ընթացքում Ս.Զ.-ի կողմից հատուցվել է»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա վերջինիս մեղադրանք է ներկայացվել 9 դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 6 դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին:

Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

Հոկտեմբերի 20-ին Ազգային անվտանգության ծառայությունը մտել էր Երեւանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոց, ինչից հետո ֆիզիկայի ուսուցչին բերման էին ենթարկել: Ուսուցիչը մեղադրվում է անառակաբարո արարքի համար, նա կալանավորված է:

Տեղի ունեցած դեպքերից հետո էլ դպրոցի աշակերտները դասադուլ էին իրականացրել ՝այդ կերպ փորձելով իրենց բողոքի ձայնը բարձրացնել, քանի որ դպրոցի տնօրեն Անահիտ Խոսրովյանին աշխատանքից հեռացրել էին եւ տնօրենի պաշտոնակատար էին բերել դրսից թեկնածուի, որի մասին իմանալով մի շարք ծնողներ նույնպես գնացել էին դպրոց՝ իրենց բողոքը հայտնելու:

Նշենք նաեւ, որ Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Դումանյանի ամուսինը ԱԱԾ աշխատակից է

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Դումանյանի հետ՝ պարզելու՝ ի՞նչ իրավիճակ է տիրում դպրոցում, արդյո՞ք դասերը շարունակվում են բնականոն հունով, սակայն դպրոցի ընդունարանից պատասխանեցին, որ վերջինս չի կարողանալու պատասխանել մեր հարցերին:

Բանն այն է, որ տնօրեն Քրիստինե Դումանյանի մոտ աուդիտորներ՝ ստուգողներ են եկել, եւ այսօր, վաղն ու մյուս օրը չի կարողանալու պատասխանել մեր հարցերին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

1 ՕՐՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 97 ԴԵՊՔ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 23-24-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 97 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված: Այս մասին տեղեկացնում են ՆԳՆ-ից:

«Մասնավորապես, բացահայտվել է տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 34, թմրանյութի հայտնաբերման՝ 17, անձնական ունեցվածքի գողության՝7, մարմնական վնասվածք պատճառելու եւ խարդախության՝ 5-ական, ֆիզիկական ներգործության՝ 4, հոգեկան ներգործության՝ 3, վստահված գույքի հափշտակման, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, պաշտոնեական կեղծիքի կամ անփութության ու պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելու՝ 2-ական, բնակարանային գողության, շորթման, դրամանենգության, խուլիգանության, կաշառակերության, պաշտոնատար անձի ծառայողական գործունեությանը միջամտելու, տրանսպորտային միջոցի կամ հրազենի նույնականացման տարրերը կեղծելու կամ ջնջելու, աշխատանքային պաշտպանության կանոնները խախտելու, հետամտելու, անառակաբարո արարք կատարելու եւ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելու, տարածելու կամ պահպանելու՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է այլ հանցագործության՝ 2, բնակարանային գողության՝1 դեպք:

Հայտնաբերվել է 2 հետախուզվող, կամավոր ներկայացել՝6-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 1 դեպք:

ԼՈՒՐԵՐ

62-ԱՄՅԱ ԿՆՈՋԸ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

ԶԼՄ-ներում տեսանյութ էր տարածվել, թե ինչպես է մի կին ներկում Երեւանի Պուշկինի փողոցի շենքերից մեկին պատկերված 44-օրյա պատերազմում զոհվածների դիմանկարները:

Փաստի առթիվ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ՝ խուլիգանության հատկանիշներով:

Հանցագործությունը բացահայտելու գործում Կենտրոնականի քրեական հետախույզներին օգնության եկան ոստիկանության Երեւան քաղաքի վարչության գործընկերները: Ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հաջողվեց հայտնաբերել եւ խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալել մայրաքաղաքի բնակիչ 62-ամյա կնոջը: Ոստիկանները կարողացան փաստական տվյալներ ձեռք բերել նաեւ կնոջ արարքին նախորդող եւ հաջորդող գործողությունների վերաբերյալ:

Մասնավորապես, առգրավվել եւ մշակվել են հսկող սարքերի նկարահանումներ, որոնցում երեւում է, թե կինն ինչպես է երկու երիտասարդի խնդրում բացել ներկող նյութի տարան, ինչպես է մոտենում շենքին, ներկով ծածկում նկարը եւ հեռանում:

Կինը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին:

Հանգամանքները պարզվում են:

ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ԴԱՆԱԿՈՎ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ ԷՐ ԱՄՈՒՍՆՈՒՆ

Հոկտեմբերի 24-ին՝ ժամը 12:15-ին, Մասիսի շտապօգնության կայանից ոստիկանություն հաղորդում է ստացվել, որ Խաչփար գյուղում դանակահարված անձ կա:

«Ոստիկանության Մասիսի բաժնից օպերատիվ խումբ է մեկնել: Խաչփար գյուղի 11-րդ փողոցի նշված տան նախասրահում ոստիկանները հայտնաբերել են տանտիրոջ՝ 44-ամյա Վարդան Ա.-ի դիակը՝ խոհանոցային դանակը պարանոցին:

Ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Մասիսի բաժնի ծառայողների համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ սպանություն կատարելու հիմնավոր կասկածանքով նույն տանը ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել սպանվածի 37-ամյա կինը:

Բացատրական աշխատանքի արդյունքում նա խոստովանել է, որ գիշերը ինքն է խոհանոցային դանակով մի քանի հարված հասցրել ամուսնուն:

Կինը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Մասիսի քննչական բաժին:

Սպանության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանգամանքները պարզվում են»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 24-ից 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 110 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍԽԱԼՆԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆ

Հոկտեմբերի 21-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին՝նրան հարցնելով՝2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից տուժած, բնակարանի, ավտոմեքենայի, այլ գույքի վնասներ կրած Տավուշի մարզի քանի՞ բնակիչ է հոկտեմբերի 21-ի դրությամբ պետական բյուջեից դրամական փոխհատուցում ստացել, ովքե՞ր են նրանք, ինչքա՞ն է յուրաքանչյուրի ստացած փոխհատուցման չափը: Մարզպետարանից պատասխանել են. «2024թ. մայիսի 25-26-ին տեղացած ջրհեղեղից տուժած տրանսպորտային միջոցների 25 սեփականատերերի ՀՀ պետական բյուջեից ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 2920100 դրամ»: Նախ՝ ջրհեղեղ չի տեղում, տեղում են անձրեւներ, որոնց հետեւանքով առաջանում է ջրհեղեղ: Երկրորդ՝ ջրհեղեղից տուժած տրանսպորտային միջոցների 25 սեփականատերերի ՀՀ պետական բյուջեից ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել ոչ թե 2920100 դրամի, այլ՝29 միլիոն 210 հազար դրամի չափով, Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրված է այդ մասին մարզպետ Հայկ Ղալումյանի հոկտեմբերի 14-ի որոշումը: Տեղեկատվական հարցմանը պատասխանելիս Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի փախարինող Ասքանազ Բաբլումյանի կողմից ուղարկվել է անփույթ, սխալներով պատասխան:

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ 56 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄՈՎ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով, թե հոկտեմբերի 21-ի դրությամբ պետական բյուջեից որքա՞ն գումարով են պարգեւատրվել Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները: Մարզպետարանից պատասխանել են. «Հոկտեմբերի 21-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 56.045 հազար դրամի պարգեւավճարներ»: Աշխատանքային ո՞ր նվաճումների, ձեռքբերումների համար են պարգեւատրվել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը եւ մարզպետի աշխատակազմի աշխատողները: 2023 թվականին Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները ընդհանուր ստացել էին 71 միլիոն 960 հազար դրամ պարգեւավճար:

ՏԱՎՈՒՇԻՑ՝ ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻ ԾՐԱԳԻՐ

Կառավարության նիստում օրերս վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկար, ըստ մարզերի համայնքների, ներկայացրեց պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերը: Տավուշի մարզի 62 բնակավայրերից միայն մեկ բնակավայրում ծրագիր ներկայացրեց՝ Իջեւան համայնքի Իջեւան քաղաքի Բլբուլյան -Այգեստան փողոցների խաչմերուկից մինչեւ Այգեստան-Ասլանյան խաչմերուկ ընկած ճանապարհահատվածի ասֆալտապատումը, որն իրականացվել է: Իջեւան քաղաքը Նիկոլ Փաշինյանի հայրենի քաղաքն է, Ասլանյան փողոցում գտնվում է իր հայրական տունը: Այդ փուլում Տավուշի մարզից իրականացվել է ընդամենը մեկ ծրագիր, այն էլ Նիկոլ Փաշինյանի թաղում: Իսկ Տավուշի մարզում բազում չլուծված հիմնահարցեր կան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐ

ՄԻԱՅՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ՞Ն Է ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՒՄ

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը հոդվածով անդրադարձել է Արցախի մշակութային ժառանգության ճակատագրի համար միջազգային կառույցների անհանգստությանը՝ նշելով, որ միջազգային կառույցների կողմից անհրաժեշտ են ուղղորդված եւ կոնկրետ քայլեր, որպեսզի հնարավոր լինի կանխել Ադրբեջանի մշակութասպան քաղաքականությունը:

Ստորեւ ներկայացնում ենք հոդվածը՝ կրճատումներով.

«2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից, 2023 թվականի Արցախի ամբողջական բռնազավթումից եւ արցախահայերի բռնի տեղահանությունից հետո Ադրբեջանը պետական մակարդակով Արցախում շարունակում է թիրախավորել եւ ոչնչացնել հայկական մշակութային ժառանգությունը: Վտանգված են հատկապես Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրները (Շուշիի, Ստեփանակերտի, Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի եւ այլն), հերոսների արձաններն ու կիսանդրիները (Ալեք Մանուկյանի, Շառլ Ազնավուրի, Հովհաննես Բաղրամյանի, Անատոլի Ձիհնեւիչի, Վազգեն Սարգսյանի, Թաթուլ Կրպեյանի, Հովհաննես Իսակովի եւ այլոց), ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողները, հայկական պատմական գերեզմանոցները (Շուշիի պատմական գերեզմանոցը, Մեծ Թաղերի, Ղազանչեցոց կոչվող հին գերեզմանոցը, Սղնախի պատմական գերեզմանոցը եւ այլն), եկեղեցիներն ու վանական համալիրները (Բերձորի Սուրբ Համբարձման, Շուշիի Կանաչ ժամ, Մեխակավանի Սուրբ Աստվածածին եկեղեցին եւ այլն), անկախության շրջանում ստեղծված մշակութային կոթողները: Ֆիզիկական ոչնչացմանը զուգահեռ՝ Ադրբեջանը շարունակում է աղվանացնել, ուղղափառ ներկայացնել (Գտչավանք, Ամարաս, Գանձասար, Դադիվանք եւ այլն) մշակութային կոթողները՝ զրկելով հայկական ինքնությունից:

Միջազգային արձագանքներն Արցախյան 44-օրյա պատերազմից մինչեւ արցախահայերի բռնի տեղահանություն.

Ընթացող մշակութային ցեղասպանությունը որոշակի արձագանքների է արժանացել միջազգային մշակութապահպան կառույցների կողմից: Դեռեւս 44-օրյա պատերազմի ընթացքում մշակութային ժառանգության պահպանության, մշակութային ցեղասպանության կանխարգելման նպատակով Հայաստանի եւ Արցախի Արտաքին գործերի եւ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունները (Արցախի Հանրապետության նախարարությունները գործել են մինչեւ 2024 թվականի հունվար, կազմալուծվել են Արցախի ամբողջական հայաթափումից հետո) պարբերաբար դիմել են միջազգային կառույցներին՝ ՅՈՒՆԵՍԿՕ, Թանգարանների միջազգային խորհուրդ (ICOM), Համաշխարհային հուշարձանների հիմնադրամ (WMF), Հուշարձանների եւ տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդ (ICOMOS) եւ այլ կազմակերպություններ, որպեսզի վերջիններս արձագանքեն, միջամտեն, կանխեն արցախյան մշակութային ժառանգության ոչնչացումը, անարգումն ու աղավաղումը:

Պատերազմի ընթացքում մշակութային ժառանգության պաշտպանության կոչեր են հնչել միջազգային հայտնի մասնագետների, գիտնականների եւ հետազոտողների կողմից: Մասնավորապես՝ 2020 թվականի հոկտեմբերի 16-ին մի շարք անվանի գիտնականներ, այդ թվում՝ Ն. Չոմսկին, Գ. Չ. Սպիվակը, Թ. Ալին, Վ. Բերբերյանը, Ջ. Հերմանը, Ք. Վեսթը, Ս. Բենհաբիբը եւ այլք.

Այնուամենայնիվ՝ գիտական հանրույթի կարծիքն ու վերաբերմունքը կարեւորելով՝ ընդգծենք, որ միջազգային կառույցներն ունեն ավելի լուրջ մեխանիզմներ եւ ադրբեջանական քարոզչամեքենայի վրա ազդեցության լծակներ: Այսպես՝ 2020 թվականի նոյեմբերի 20-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեն հանդես է եկել հայտարարությամբ՝ պատրաստակամություն հայտնելով տեխնիկական աջակցություն եւ առաքելություն ուղարկել Արցախ՝ պատմամշակութային եւ կրոնական ժառանգությանը ծանոթանալու եւ պահպանման ուղղությամբ անհրաժեշտ քայլերը նախանշելու նպատակով, սակայն մինչ օրս Ադրբեջանն իր համաձայնությունը չի տվել: 2023 թվականին Օդրի Ազուլեն կրկին վերահաստատել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայտը՝մուտք գործել Արցախ եւ մոնիթորինգ իրականացնել մշակութային ժառանգության իրավիճակի առնչությամբ. Ադրբեջանը մերժել է հայտը՝ կտրականապես արգելելով միջազգային կառույցներին «խառնվել իր երկրի ներքին գործերին»:

Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը (ԻԿՕՄՕՍ) մի քանի հայտարարություն է տարածել՝ դատապարտելով Արցախում հայկական ժառանգության, մասնավորապես՝ միջնադարյան հայկական եկեղեցիների, վանքերի եւ խաչքարերի ոչնչացումը.

Անպատասխան է մնացել նաեւ մշակութային ցեղասպանությունն Արցախում դադարեցնելու վերաբերյալ ԻԿՈՄՈՍ-ի, ԻԿՈՄ-ի եւ ԻՍԱ-ի համատեղ հայտարարությունը. Այսպիսով՝ ակնհայտ է, որ միջազգային կառույցները, շարունակական կոչերով եւ բանաձեւեր ընդունելով, փորձում են զսպել հայկական ժառանգության ոչնչացման եւ յուրացման ադրբեջանական նկրտումները: Սակայն փաստ է, որ այդ կոչերը բավական չեն. միջազգային կառույցների կողմից անհրաժեշտ են ուղղորդված եւ կոնկրետ քայլեր, որպեսզի հնարավոր լինի կանխել Ադրբեջանի մշակութասպան քաղաքականությունը:

ՀՀ-ՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՎՈՒՄ ԵՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐ

Հոկտեմբերի առաջին շաբաթից սկսվել է գրիպի եւ սուր շնչառական վարակների սեզոնը:

ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնն իրականացնում է մշտադիտարկում այս հիվանդություններով պայմանավորված իրավիճակի զարգացման միտումներին հետամուտ լինելու նպատակով: Ըստ այդմ՝ սուր շնչառական վարակներով պայմանավորված իրավիճակն օրինաչափ եւ համահունչ է ներկայիս սեզոնին:

Այսպես՝ 2024 թվականի հոկտեմբերի երրորդ շաբաթվա ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների հիվանդացության ցուցանիշները նախորդ՝ հոկտեմբերի երկրորդ շաբաթվա համեմատ աճել են, սակայն նախորդ տարվա միեւնույն ժամանակահատվածի համեմատ ցածր են: Հարկ է նշել, որ այսօր համեմատաբար բարձր ցուցանիշներ գրանցվում են մինչեւ 4 տարեկան երեխաների շրջանում, որը կազմում է ընդհանուր դեպքերի 71%-ը:

Ներկա դրությամբ՝ ՀՀ-ում գրիպի վիրուսի հարուցիչներ չեն շրջանառում: Շրջանառում են այլ շնչառական վարակների՝

ռինովիրուսի,

բոկավիրուսի,

կորոնավիրուսային հիվանդության (SARS-Cov-2) հարուցիչներ:

Սուր շնչառական վարակներով եւ գրիպով չհիվանդանալու, ինչպես նաեւ բարդություններից խուսափելու համար՝

պատվաստվե՛ք գրիպի դեմ՝ դիմելով առողջության առաջնային պահպանման կազմակերպություն.

խուսափե՛ք գրիպանման երեւույթներով հիվանդների հետ շփումից.

եթե հիվանդ եք, մնացե՛ք տանը, հրավիրե՛ք տեղամասային մանկաբույժին, թերապեւտին կամ ընտանեկան բժշկին եւ մի՛ զբաղվեք ինքնաբուժմամբ.

մի՛ օգտագործեք հակաբիոտիկներ, քանի որ դրանք ցուցված չեն գրիպի բուժման համար.

հագնվե՛ք եղանակին համահունչ

պահպանե՛ք հազի եւ փռշտալու վարվելակարգը.

օգտագործե՛ք հնարավորինս շատ հեղուկներ.

հաճախակի օդափոխե՛ք փակ տարածքները.

հետեւե՛ք անձնական հիգիենային:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 30 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

Հայաստանում, ինչպես եւ ԵԱՏՄ բոլոր երկրներում, շինարարական աշխատանքների ծավալը, 2024 թվականի հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 6,6% - ով:

ԵԱՏՄ-ի համար աճի ընդհանուր ցուցանիշը նույն ժամանակահատվածում կազմում է 3,6 տոկոս, իսկ առաջատարը Ղրղզստանն է՝ 38 տոկոսով:

Հայաստանում շինարարության ֆինանսավորման ծավալները կազմել են 71 մլրդ 361.9 մլն դրամ միայն օգոստոս ամսին: 2024 թվականի հունվար-օգոստոս ամիսներին Հայաստանի Հանրապետությունում շիրանարարության ծավալները կազմել են 330 մլրդ 735.4 մլն դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՓՈՐՁ Է ԱՐՎԵԼ ԻՐԱՆԻՑ ՀՀ ՆԵՐՄՈՒԾԵԼ ԱՌԱՆՑ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՄԱԿՆՇՄԱՆ ԾԽԱԽՈՏ

Իրավապահ մարմինների միջեւ համագործակցության շրջանակում ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցներն ԱԱԾ-ից օպերատիվ տվյալներ էին ստացել առ այն, որ ԻԻՀ-ից ՀՀ տարածք բեռ տեղափոխող բեռնատար ավտոմեքենայում հնարավոր է թաքցված լինի մեծ քանակությամբ ծխախոտային արտադրանք:

Ստացված տեղեկությունների հիման վրա իրականացված վերլուծության արդյունքում հսկողության տակ էին վերցվել մի շարք տրանսպորտային միջոցներ:

«Օպերատիվ տեղեկությունն իրացնելիս՝ ՊԵԿ ՄԴՊ վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցներն, ԱԱԾ Երեւան քաղաքի վարչության եւ Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների հետ համատեղ, զննման են ենթարկել Իրանից Հայաստան ժամանած ՀՀ քաղաքացի Ռ.Հ.-ի կողմից շահագործվող բեռնված բեռնատարը: Արդյունքում՝ նշված բեռնատարի կիսակցորդից՝ ցեմենտի պարկերի տակ թաքցված, հայտնաբերվել է առանց ակցիզային մակնշման 68.500 տուփ ծխախոտ:

ՄԴՊ վարչության ծառայողների նախնական հաշվարկով, վերոնշյալ ծխախոտները թաքցնելու միջոցով ՀՀ տարածք ներմուծելու արդյունքում, չի հաշվարկվել եւ պետական բյուջե չի վճարվել շուրջ 22,5 մլն ՀՀ դրամ ակցիզային հարկ, այսինքն՝ քաղաքացու արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

Իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող 68.500 տուփ ծխախոտը եւ բեռնատար ավտոմեքենան վերցվել եւ ի պահ են հանձնվել «Ագարակ» մաքսային անցման կետում: Ռ.Հ.-ն ձերբակալվել եւ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով կազմված նյութերի հետ միասին ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչություն»,- ասված է ՊԵԿ հաղորդագրության մեջ:

50 ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ

ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ակբա բանկն առաջինը Հայաստանում համագործակցություն է մեկնարկում ԱՄՆ Միջազգային զարգացման ֆինանսական կորպորացիայի (ԶՖԿ) հետ, որի արդյունքում 50 միլիոն ԱՄՆ դոլար կուղղվի Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին (ՄՓՄՁ) աջակցելու, տնտեսական աճը խթանելու համար:

Միջոցների առնվազն 50%-ը կտրամադրվի կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններին՝ ստեղծելով հատուկ հնարավորություններ վերջիններիս զարգացման համար:

«Առաջին անգամն է, որ ԶՖԿ-ն պայմանագիր է կնքում հայաստանյան կազմակերպության, մասնավորապես Ակբա բանկի հետ: Ստացված ռեսուրսներն ուղղելու ենք մեր երկրի միկրո, փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը: Հատուկ շեշտվելու է կանանց դերը այդ բիզնեսներում եւ ներգրավված միջոցների էական մասն ուղղվելու է կանանց ղեկավարությամբ իրականացվող բիզնեսների զարգացմանը: Այս համագործակցությամբ մենք նպաստելու ենք ամբողջ Հայաստանում բիզնեսի շարունակական զարգացմանը»,- նշել է Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Այսօր նշում ենք Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ կարեւոր գործակցությունը: Ակբա բանկի հետ գործակցությունը մեր ընդհանուր արժեքների եւ Հայաստանում տնտեսական աճը խթանելու մասին է: Փոքր բիզնեսն ազատ շուկայի շարժիչ ուժն է, այն ստեղծում է աշխատատեղեր եւ հնարավորություններ համայնքների համար: ԱՄՆ Միջազգային զարգացման ֆինանսական կորպորացիան օգտագործում է իր գործիքները եւ լիազորությունները՝ ապահովելու ֆինանսավորման այնպիսի հասանելիություն, որը կօգնի զարգացնել հայկական բիզնեսները եւ առաջ մղել Հայաստանի տնտեսությունը»,- նշել է ԱՄՆ Միջազգային զարգացման ֆինանսական կորպորացիայի փոխտնօրեն Նիշա Բիսվալը

«Սա ԱՄՆ Միջազգային զարգացման ֆինանսական կորպորացիայի կողմից արված երբեւէ ամենամեծ ներդրումն է Հայաստանում, որը ստանում է Ակբա բանկը: Կարծում եմ, սա կարեւոր քայլ է փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորման հասանելիության ընդլայնման համար: Այն հնարավորություն կտա տեղական բիզնեսներին աճել, իրականացնել նորարարություններ եւ նոր աշխատատեղեր ստեղծել»,- նշել է ՀՀում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը:

«Այս համագործակցությունը ոչ միայն աջակցում է Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկություններին, այլեւ եւս մեկ կարեւոր քայլ է ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ տնտեսական հարաբերությունների շարունակական խորացման ուղղությամբ: Այս վարկային ծրագիրը կօգնի հայկական ձեռնարկություններին ընդլայնվել, զարգանալ եւ մրցունակ լինել թե՛ տեղի, եւ թե՛ միջազգային շուկաներում»,- նշել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը:

«Ակբա բանկը մեր բանկային համակարգի առաջատարներից մեկն է եւ երկար տարիներ ցուցաբերում է կայուն ֆինանսական ցուցանիշներ: Բանկը ներդրել է լավագույն ստանդարտները հատկապես կորպորատիվ կառավարման ոլորտում եւ երկար տարիներ գտնվել է հայ գործարարների, գյուղատնտեսական ոլորտի եւ ՓՄՁ ոլորտի կողքին:

Ակբա բանկի փորձառու մասնագետները դարձել են այդ գործարար շրջանակի գործընկերներն ու խորհրդատուները, մեր գործարարների կողքին են իրենց նախաձեռնությունների սկզբից մինչեւ հաջող ավարտը»,- նշել է ՀՀ ԿԲ խորհրդի անդամ Դավիթ Նահապետյանը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Women in Web3 Award ՄՐՑԱՆԱԿՆ ՈՒՂԵՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆ

WOMEN IN TECH Global-ի՝ Ուզբեկստանում անցկացված Women in Web3 Award-ի (Կանայք Web3-ում մրցանակաբաշխություն) մրցանակն ուղեւորվում է Հայաստան: Մրցանակի արժանացել է Wearify-ի հիմնադիր անդամ եւ AI ծրագրավորող Նազելի Տեր-Պետրոսյանը: Անվանակարգում եզրափակչում հազարավոր մասնակիցներից ընտրվել էին 5 կանայք. Հայաստանից առաջադրվել էին նաեւ Web3 Հայաստան հիմնադրամի գործադիր տնօրեն Մետաքսե Ղամբարյանը եւ Else Dev Studio-ի գլխավոր տեխնոլոգիական տնօրեն Լուսինե Պրիբիլսկայան:

Women in Tech…-ը միջազգային կազմակերպություն է, որի առաքելությունն է մեղմել գենդերային բացը եւ օգնել կանանց ինտեգրվել տեխնոլոգիական ոլորտում: Նպատակն է կրթել, զինել եւ հզորացնել կանանց եւ աղջիկներին անհրաժեշտ հմտություններով, վստահությամբ եւ STEM կարիերայի ոլորտներում հաջողության հասնելու հնարավորություններով:

Women in Tech…-ը տեխնոլոգիական ոլորտում կանանց համար նախատեսված միակ կազմակերպությունն ենք, որն ունի ծրագրեր կնոջ կարիերայի կյանքի յուրաքանչյուր փուլի համար: Կազմակերպությունը վստահ է՝ կանայք տեխնոլոգիական ոլորտի ամենաչօգտագործված ռեսուրսն են: Եվ այս համատեքստում Women in Tech-ը STEAM-ում գենդերային հավասարության համար պայքարող մարդկանց համաշխարհային շարժում է:

Նշենք, որ կազմակերպությունն ինքն է ընտրել ներկայացված թեկնածուներին:

5 ՀԱՏ iPhone 16 ԵՎ 0% ՄԻՔՆՈՐԴԱՎՃԱՐ

Կոնվերս Բանկը հայտարարում է հերթական խրախուսման արշավը Visa քարտապանների համար: Արշավի շրջանակում՝ 21.10.24- 30.11.24թթ. ներառյալ կատարելով միջազգային Card2Card փոխանցումներ Visa քարտերով ՝ Բանկի հաճախորդները կօգտվեն 0% միջնորդավճարից՝ գործող 1,5%-ի փոխարեն, իսկ փոխանցումների ընդհանուր ծավալով 1-5 հորիզոնականները զբաղեցրած քարտապանները՝ նաեւ iPhone 16: Ըստ որում, հաշվի է առնվելու ինչպես Բանկի հեռակառավարման հարթակներով՝ Converse Mobile, Ինտերնետ Բանկ, Վճարումների առցանց հարթակ, այնպես էլ մասնաճյուղերում կատարված գործարքների հանրագումային ծավալը:

Արշավի արդյունքները կամփոփվեն այս տարվա դեկտեմբերին:

Կոնվերս Բանկում նշել են նաեւ, որ դեկտեմբերին կամփոփվեն նաեւ Visa քարտապանների համար մեկ այլ արշավի արդյունքները: Արշավին կարող են մասնակցել Բանկի՝ C360 NEO, C360 ULTRA եւ C360 ELITE փաթեթների ներքո Visa քարտ ունեցող հաճախորդները:

2024 թվականի սեպտեմբերի 23-ից 2024 թվականի նոյեմբերի 23-ը ներառյալ կատարելով առնվազն 30,000 ՀՀ դրամի ընդհանուր չափով գործարք կամ գործարքներ, նրանք կարող են հավակվել արժեքավոր նվերների՝ էլեկտրամոբիլ, 10 հատ 360$-ին համարժեք ՀՀ դրամ եւ այլն:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Ի ՀԻՇԱՏԱԿ ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ

ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ԲԵՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ

Հոկտեմբերի 24-ը հայ մեծանուն դերասան, թատրոնի եւ կինոյի գիգանտ համարվող Սոս Սարգսյանի ծննդյան օրն էր:



Սոս Սարգսյանը մեծ ավանդ է թողել թե՛ իր ապրելու եւ ստեղծագործելու ընթացքում, թե՛ իր մահվանից հետո:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է դերասանի կյանքից հետաքրքիր դեպքեր:

1960-ականներին, երբ նա դեռ երիտասարդ դերասան էր եւ խաղում էր Հրաչյա Ղափլանյանի ղեկավարած Երեւանի դրամատիկական թատրոնում, մի քանի բարդ ու ծանր դերեր ստանձնեց: Այդ տարիներին Սոս Սարգսյանը նկարահանվում էր նաեւ հայկական ֆիլմերում, այդ թվում՝ «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմում, որտեղ նա մարմնավորում էր Իշխանի դերը:

Պատմում են, որ մի անգամ փորձի ընթացքում Սոս Սարգսյանն այնքան էր տարված իր դերով, որ ընկալել էր ոչ միայն իր կերպարի, այլեւ իր սեփական ճակատագրի ծանրությունը: Այդ օրերից մեկը կապված է մայր թատրոնում՝ Արթուր Միլլերի «Սալեմի վհուկները» բեմադրության հետ, որտեղ Սարգսյանը մարմնավորում էր շատ պահանջկոտ եւ հուզական դեր: Նա այնքան խորն էր մտել դերի մեջ, որ որոշ քննադատներ եւ գործընկերներ կարծում էին, որ դա դուրս էր եկել սովորական դերասանական աշխատանքի սահմաններից: Արդյունքում, նա որոշեց որոշ ժամանակահատված դադար վերցնել եւ վերականգնել իր հոգեկան եւ ֆիզիկական հավասարակշռությունը:

Սարգսյանը հայտնի էր իր այն համոզմամբ, որ յուրաքանչյուր դերասան պետք է իր հոգին ներդնի դերում, բայց երբեմն դա կարող էր արտասովոր ծանրությունների պատճառ դառնալ: Այս դեպքը վկայությունն է Սոս Սարգսյանի այդ մտքի:

Արցախյան պատերազմի տարիներին, երբ շատերը մեկնում էին ռազմաճակատ, Սոս Սարգսյանը նույնպես որոշեց միանալ կամավորներին: Չնայած իր տարիքին եւ ճանաչվածությանը՝ նա անձամբ որոշեց գնալ ռազմաճակատ, թեպետ շատերը փորձեցին նրան հետ պահել՝ ասելով, որ նա պետք է մնա եւ շարունակի իր մշակութային գործունեությունը: Սարգսյանը, սակայն, պնդել է, որ ամեն հայ իր տեղն ունի հայրենիքի պաշտպանության գործում, որ նույնիսկ որպես դերասան՝ նա պետք է մասնակցի պայքարին:

Այնտեղ Սոս Սարգսյանը չի մասնակցել ակտիվ մարտերին, այլ հիմնականում զբաղվում էր հոգեբանական աջակցությամբ՝ իր արվեստի միջոցով: Նա այցելում էր մարտական դիրքեր, խոսում էր զինվորների հետ, կիսվում էր իր փորձով եւ փորձում էր բարձրացնել մարտիկների տրամադրությունը եւ ոգին: Նրա ներկայությունը այդ ժամանակաշրջանում մեծ նշանակություն ունեցավ բազմաթիվ զինվորների համար, քանի որ նրանց կողքին գտնվելով՝ ինքը հոգեպես աջակցում էր նրանց՝ ստիպելով զգալ, որ իրենք միայնակ չեն եւ մշակույթի մարդիկ էլ իրենց կողքին են:

Մեկ այլ դեպք է, երբ 1992 թվականին, երբ Հայաստանը դժվարին օրեր էր ապրում անկախության առաջին տարիներին, Սոս Սարգսյանը որոշեց, որ ժամանակն է ստեղծել մի թատրոն, որը կապրեր ազգային արժեքներով եւ կխոսեր հենց հայ ժողովրդի հոգսերի եւ պայքարի մասին: Նա իր նախաձեռնությամբ հիմնեց Համազգային թատրոնը, որը պետք է դառնար նոր սերնդի դերասանների եւ թատերական արվեստի տուն: Թատրոնի հիմնադրումը կարեւոր նշանակություն ունեցավ, քանի որ այն ստեղծվեց մի ժամանակահատվածում, երբ երկիրը զուրկ էր տնտեսական եւ մշակութային կայունությունից, սակայն Սարգսյանը հավատում էր, որ մշակույթն անհրաժեշտ է պահպանել ու զարգացնել անգամ ամենադժվար պահերին:

Մի պատմություն կա. երբ թատրոնի շենքը դեռ կառուցման փուլում էր, Սարգսյանը երբեմն անձամբ մասնակցում էր շինարարական աշխատանքներին: Նա կարող էր տեսնել, որ միջոցները սահմանափակ էին եւ շատերը չէին հավատում, որ այդ նախագիծը կարող է հաջողություն ունենալ, բայց նա անսասան էր իր որոշման մեջ: Շենքի կառուցման ընթացքում նա նույնիսկ իր ընտանիքի որոշ անձնական միջոցներ ուղղեց թատրոնի զարգացմանը՝ միայն թե երազանքը իրականություն դառնա:

Արդյունքում, Համազգային թատրոնը դարձավ Հայաստանի մշակութային կենտրոններից մեկը եւ Սարգսյանի նպատակն իրականություն դարձավ: Դա ցույց է տալիս ոչ միայն նրա՝ որպես մեծ դերասանի տաղանդը, այլեւ նրա տեսլականն ու նվիրվածությունը հայկական մշակույթի զարգացմանը եւ պահպանմանը՝ անկախ այն դժվարություններից, որոնք կարող էին առաջանալ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՖԼԵՅՏԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Հոկտեմբերի 26-30-ը առաջին անգամ Երեւանում կանցկացվի ֆլեյտայի միջազգային փառատոն: Այն իրականացվում է Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի, Մոսկվայի ֆլեյտայի կենտրոնի եւ Գոնչարով ստուդիայի համագործակցությամբ

Նախագծի շրջանակներում 4 օր շարունակ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի կունենան համերգներ, վարպետության դասեր, դասախոսություններ եւ ֆլեյտայի համաշխարհային ապրանքանիշերի ցուցահանդես-աշխատարան:

Փառատոնի հյուրերն են՝ Ֆրանկֆուրտի օպերային նվագախմբի մենակատար, Ժնեւի ֆլեյտայի միջազգային մրցույթի 1-ին մրցանակի դափնեկիր (2023թ.) Ելիզավետա Իվանովան (Ռուսաստան / Գերմանիա), Բարոկ ֆլեյտահար (տրավերս ֆլեյտա) Լայպցիգի կոնսերվատորիայի պրոֆեսոր, Utrecht Early Music Festival, Musicora Paris, Avignon Festival, Stockholm Early Music, Innsbrucker Festwochen der Alten Musik փառատոների մասնակից Բենեդեկ Չալոգը (Հունգարիա), Ղազախստանի պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի մենակատար, Ղազախստանի պետական ֆիլհարմոնիայի մենակատար, Concours international du jeune flutiste միջազգային մրցույթի հաղթող, Marcel Bleustein ֆրանսիական հեղինակավոր հիմնադրամի մրցանակակիր Երժան Կուշանովը (Ղազախստան), Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի մենակատար եւ կոնցերտմայստեր, ֆլեյտայի բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր եւ ժյուրի Նարեկ Ավագյանը (Հայաստան), բազմաթիվ հեղինակավոր պատանեկան եւ երիտասարդական միջազգային մրցույթների, այդ թվում՝ Տոկիոյի ֆլեյտայի միջազգային մրցույթի, Շչելկունչիկ հեռուստատեսային մրցույթի, Գնեսինների անվան ֆլեյտայի միջազգային մրցույթի դափնեկիր Էլեն Վիրաբյանը (Ռուսաստան / Հայաստան), Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի ֆլեյտահար, Երեւանի սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմեյստեր, Վերածնունդ քառյակի ֆլեյտահար, ՀԲԸՄ «Երաժշտական Հայաստան» նախագծի հրավիրյալ դասախոս Արման Աբրահամյանը (Հայաստան). Վարշավայի ուսուցիչ-կատարողների միջազգային մրցույթի հաղթող, Գնեսինների անվան մասնագիտական երաժշտական դպրոց. քոլեջի դասախոս Զառա Փարվանյանը (Ռուսաստան / Հայաստան):

Փառատոնային համերգները տեղի կունենան հոկտեմբերի 27-ին, 28-ին, 29-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում:

Փառատոնի օրերին վարպետության դասեր կանցկացնեն Ելիզավետա Իվանովան, Բենեդեկ Չալոգը, Նարեկ Ավագյանը, Զառա Փարվանյանը եւ Երժան Կուշանովը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿ

Հոկտեմբերի 24-ին ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների դասակարգման վարկանիշային թարմացված աղյուսակը:

Հայաստանի ազգային հավաքականը նահանջել է երեք հորիզոնականով եւ այժմ զբաղեցնում է 99-րդ տեղը: Այս մասին հայտնում է ՖԻՖԱ-ի պաշտոնական կայքը: Արգենտինայի ընտրանին պահպանել է առաջատարի դիրքը: Իրենց տեղերը պահպանել են նաեւ առաջատար տասնյակի բոլոր մյուս ազգային ընտրանիները՝ հաջորդաբար Ֆրանսիան, Իսպանիան, Անգլիան, Բրազիլիան, Բելգիան, Նիդերլանդները, Պորտուգալիան, Կոլումբիան, Իտալիա:

ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն ընդունել է Օլիմպիական խաղերի հայ մեդալակիրներին: Այս մասին նա տեղեկացրել է ֆեյսբուքյան իր էջում:

«Ինձ համար մեծ պատիվ էր ընդունել եւ պարգեւատրել Փարիզի ամառային օլիմպիական խաղերի հայ մեդալակիրներ Արթուր Ալեքսանյանին, Արթուր Դավթյանին, Մալխաս Ամոյանին, Վարազդատ Լալայանին, քանի որ իրենց հաղթանակներն ու գրանցած հաջողությունները ոչ միայն հպարտություն են առաջացնում բոլորիս մոտ, այլ նաեւ մոտիվացնում են այն երիտասարդներին, ովքեր իրենց առաջին քայլերն են անում մեծ սպորտում: Երեւանի քաղաքապետարանը մեծ կարեւորություն է տալիս սպորտին եւ առողջ ապրելակերպին: Դրանով են պայմանավորված ոչ միայն մարզադպրոցների վերակառուցումներն ու հիմնանորոգումները, բակային տարածքներում սպորտով զբաղվելու հարմարավետ պայմաններ ստեղծելը, այլ նաեւ տարատեսակ սպորտային միջոցառումների անցկացումը, որոնց մասնակցում են բազմաթիվ մարզիկներ, ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից», - գրել է նա:

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ՝ ԱՄԵՆԱԹԱՆԿԱՐԺԵՔ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

Հենրիխ Մխիթարյանը շարունակում է մնալ 35 տարեկանից բարձր ամենաթանկարժեք ֆուտբոլիստների տասնյակում՝ եթե հաշվի առնենք աշխարհի բոլոր լիգաները: Այս ցուցանիշով նա 6-րդն է աշխարհում եւ երրորդը՝ Եվրոպայում:

Առաջատարն արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսսին է՝ 25 մլն եվրո տրանսֆերային արժեքով:

1. Լիոնել Մեսսի - 25 մլն եվրո
2. Ռոբերտ Լեւանդովսկի - 15 մլն եվրո
3. Կրիշտիանու Ռոնալդու - 15 մլն եվրո
4. Կարիմ Բենզեմա - 10 մլն եվրո
5. Թոմաս Մյուլեր - 8 մլն եվրո
6. Հենրիխ Մխիթարյան - 6 մլն եվրո
7. Լուկա Մոդրիչ - 6 մլն եվրո

Մխիթարյանը նաեւ 35 տարեկանից բարձր ամենաթանկարժեք ֆուտբոլիստն է Ա Սերիայում:

Հիշեցնենք, որ Հենրիխի տրանսֆերային արժեքը չի փոխվում արդեն երկու տարի:

● Նոյեմբերի 3-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Հոբելյանական հաճախորդ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Գործատուս պահանջում է ազատվելու դիմում գրել ու չի թողնում, որ աշխատեմ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Ռոզա Վարդանյան (21 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե գործատուն առանց պատճառաբանության ցանկանում է ազատել Ձեզ աշխատանքից, իսկ Դուք չեք ցանկանում, ապա աշխատանքից ազատվելու դիմում չգրելը Ձեր իրավունքն է, եւ գործատուն իրավունք չունի հարկադրելու Ձեզ ազատվել աշխատանքից: Եվ եթե ցանկանում է ազատել Ձեզ աշխատանքից իր նախաձեռնությամբ, ապա օրենքը հստակ սահմանում է այդ դեպքերի սպառիչ ցանկը, որոնց դեպքում գործատուն պետք է նախապես ծանուցի աշխատողին կամ գրավոր բա-ցատրություն վերցնի աշխատողից, երբ ցանկանում է աշխատողին ազատել աշխատանքից ինչ-որ խախտումների պատճառով: Իսկ այն դեպքում, երբ գործատուն արգելում է Ձեզ ներկայանալ աշխատանքի եւ կատարել Ձեր աշխատանքային պարտականությունները, ապա Դուք իրավունք ունեք պահանջել գործատուից վճարել Ձեզ այն օրերի համար, որոնց ժամանակ Դուք չեք կարողացել աշխատել, ինչպես նաեւ պահանջել վճարել Ձեզ պատճառված վնասները:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետք է նկատի ունենալ, որ նման իրավիճակում պետք է ինքներդ Ձեզ ապահովագրեք հնարավոր բացասական իրավիճակներից, երբ, օրինակ, գործատուն կփորձի Ձեր՝ աշխատանքի չներկայանալը ներկայացնել որպես պատճառ Ձեզ աշխատանքից ազատելու համար: Դա կանխելու համար անհրաժեշտ է հնարավորինս շուտ գործատուին ուղարկել դիմում, որով կխնդրենք պարզաբանել, թե ինչու նա չի թույլատրում աշխատանքի ներկայանալ, արդյոք նա ազատել է Ձեզ աշխատանքից, թե ոչ: Դիմումը անհրաժեշտ է ուղարկել փոստային ծառայությամբ՝ հետադարձ ծանուցմամբ, որպեսզի հետագայում կարողանաք հիմնավորել, որ Ձեր դիմումը գործատուն ստացել է: Այս քայլը Ձեզ հնարավորություն կտա հետագայում, երբ վեճ առաջանա Ձեր եւ գործատուի միջեւ, փաստաթղթային տարբերակով հիմնավորել եւ ապացուցել, որ հենց գործատուն է խոչընդոտել Ձեր՝ աշխատանքի ներկայանալուն:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որքան եմ պարտք բանկին, բայց ինձ ուղղորդում են իրավաբանների մոտ: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Սեդա Հայրապետյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նման դեպքում կարող եք հետեւել բանկի տվյալ աշխատակցի ուղղորդմանը եւ այցելել այն բանկ, որտեղ առկա են Ձեր պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տվյալներ: Եթե բանկից առհասարակ հրաժարվում են Ձեր պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, ապա կարող եք ձեռնարկել հետեւյալ քայլերից որեւէ մեկը՝

-դիմել ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ՝ներկայացնելով Ձեր խնդիրը բանկի հետ, եւ խնդրել նրանց միջամտությունը: Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ծառայություններն անվճար են:

-Այցելել «ԱՌՔԱ» վարկային բյուրոյի կայքը եւ գրանցվել կայքում: Կայքում գրանցվելուց հետո Դուք հնարավորություն կստանաք ցանկացած պահի մուտք գործել կայքում բացված Ձեր անձնական էջ եւ ստանալ ամբողջական տեղեկատվություն Ձեր վարկային պատմության վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացու՝ բանկի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հասանելի լինել ոչ բոլոր մասնաճյուղերում, կամ ոչ բոլոր մասնաճյուղերի աշխատակիցները կարող են հասանելիություն ունենալ տվյալների այդ բազային, այդ պատճառով բանկի տվյալ մասնաճյուղի աշխատակիցը կարող է Ձեզ ուղղորդել այն մասնաճյուղ կամ այն աշխատակցի մոտ, որը տիրապետում է այդ տեղեկություններին կամ հասանելիություն ունի տվյալների համակարգին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Ըմբշամարտի աշխարհի մինչեւ 23 տարեկանների առաջնության գերծանր քաշային կարգի որակավորման փուլում հայ եւ թուրք ըմբիշների միջեւ ծեծկռտուք է տեղի ունեցել: Երկու մարզիկներն էլ որակազրկվել են:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	+3 + 6 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +17 + 19
Գեղարքունիք	+3 + 8 +11 + 15
Լոռի	+ 3 + 7 +12 + 16
Տավուշ	+ 7 + 13 +15 + 19
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20

Արարատ	+ 9 + 11 +19 + 22
Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
Երեւան	+15 + 18 + 22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*